

ԻՐԱՎՈՒՆԿ

ԻՐԱՎՈՒՆԿ ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Pere G. Kalemkarian M. chitarist ngasse
124 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	Համակ դրամ եռայն քրկն անտենայ հասցեով	Խմբագրության ուղղեալ գրութիւնք և չեն ընկալի: Եւ յարմար դրամած- ները միայն կը հրատարակուին աւ- րոյշովին կամ մասամբ: Պատկերներ 20 սանթիմ. երե- քն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լինի:
Պատկերայն համար Տարեկան 12 ֆր. » » » » » 6 ֆր. Արտատպանութիւն համար (երկու քիւր մէկ հարույ) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր. Ամերիկայի » 2.60 տղ վեցամս 1.50	Редакция на ВѢСТНИКЪ „И р а в у н к ъ“ ВАРНА (България)	Rédaction du journal „Ira vounk“ V A R N A (Bulgarie)

ԶԵԿՈՅՑ

Չատկական տօնիւրու տաթիւ.
յուշովիկայ շորիքշաբթի իրաշնունք
չգիտի հրատարակուի:

Գիւղերը բնակող մեր յարգոյ
բաժանորդներէն կը խնդրուի որ
Չատկի պատճառաւ քաղաք իջ-
նայնուն հաճին իրենց պարտքը մեզ
գրել:

Որոնք որ մեզ պարտք ունենալ
նուն պատճառաւ փետրվար ամսէն
ի վեր թերթ չեն ստանար թող
հաճին ընդհապ հաշիւներն մաքրել
եւ ազատել զմեզ իրենցմէ զբաւ
պահանջելու անհաճոյ հարկէն:

ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՊՐԻԼԻԱՆԱԿԱՆ ԽԵՂԻՐԸ

— 10 —

Խեղկատակութիւնը զոր Օրմա-
նեան Պատրիարք և վարչապետ
ճատեան Արթին բաշտ խաղացին
կիլիկիէն կաթողիկոսական խնդ-
րին չուրջ և զոր Սուլթանի պաշ-
տօնեան — Առանայի կուսակալը —
կատակաւ-կղերական զուլա-գործո-
ցով մը վերջացուց՝ տակաւին տես-
նուած չէ մեր ազգային-եկեղեցա-
կան տարեգրութիւնաց մէջ:

Մինչեւ հիմա տիրող սովորու-
թեան մը համաձայն, կիլիկիոյ
կաթողիկոսը ընտրող պատգամա-
ւորական ժողովը Առանայի մէջ
ինիստ գումարելով, նախ կը
պատրաստէր ընտրելիաց ցանկ մը
և յետոյ, երկրորդ ժողովի մը մէջ
փոխնական ընտրութիւն կը կա-
տարէր և արդիւնքը կը հաղորդէր
ի Պատրիարքարան, վաւերացուե-
լու համար Երեսփ. ընդհ. ժողովէն
որմէ յետոյ պաշտօնագրով մը Բ.
Գրան կը ներկայացուէր ընտրիա-
լին անունը, սպասելով Սուլթանի
իրաւէին:

Այս անգամ Պատրիարք և վար-
չապետ, ոտքի տակ առնելով Ազգ.
Սահմանադրութիւնը և Ազգային-
եկեղեցական դարաւոր իրաւունք-
ներն ու առանձնաշնորհութիւնները,
հետեւեալ ալիանդակ փոփոխու-
թիւնները ներմուծեցին կաթողի-
կոսի ընտրական գործողութեանց
մէջ, չամչնալով Պոլսոյ թերթերու
մէջ հրատարակել թէ ընտրութիւ-

նը ամեն տեսակետով յար և նման
պիտի լինի վաղեմի սովորութեանց:
Ա. — Պատրիարք և վարչապետ
ընդունեցին որ զատական նախա-
բարութեան կողմէ պաշտօնեայ մը
իրիւս Պոկոնչոք բազմի պատգ-
մողովին մէջ:

Բ. — Ընդունեցին որ Պատգմ.
ժողովը ընտրելիաց ընդհանուր
ցանկ մը պատրաստէ որ նախ զըր-
կուի Բ. Գրան, հարկ եղած սըր-
բազրութիւնը կրիւս համար. եւ
ի վերջոյ սրբաբնակ ցանկը վերա-
դարձուի Առանա ու այդ ցանկէն
ընտրուի կաթողիկոսը:

Գ. — Ընդունեցին որ կաթողի-
կոսի ընտրութիւնը փոխնակ Ազգ.
Երեսփ. ժողովէն վաւերացուի:
Պատրիարքարանի խառն ժողովէն
վաւերացուի բաւ համարուի:

Զի նայելով այս ամենուն օրի-
նական բռնաբարութեանց և զի-
ջումներուն, անգին կառավարու-
թիւնը խաղ մը կը պատրաստէր
որ, սիրելի է յուսալ թէ, ո՛չ Օռ-
մանեանի, ո՛չ ալ Տատեանի մըտ-
քէն կանցնէր:

Պատրիարքարանի ներկայացու-
ցիչ Սահակ եպիսկոպոս Խաչա-
եան Առանա ժամանելով կը պատ-
րաստուի իր յանձնարարները մա-
տուցանել կուսակալին եւ հրաւի-
րագիրը ուղղել աշխարհական եւ
եկեղեցական պատգամաւորներուն.
բաց ահա կուսակալը ի գլու կը
ցցուի կը յայտարարէ թէ «Ոչ
գիտեմ զՁեզ»: Սահակ եպիսկո-
պոս կը չէզոքացուի, աշխարհա-
կան պատգամաւորները կը մերժը-
րին. կուսակալը երկու ոտիկանով
Սիսեի բերել կուսայ ծերանի Բէք-
մէզեան կիրակոս եպիսկոպոսը եւ
Սիսի խաչագող միաբաններէն 1, 2
վարդապետ ու ներկարարեան Պետ-
րոս վարդապետը, զանոնք, ընդ
ամենը 4-5 հոգի, ի ժողով գո-
մարել կուսայ և Առանայի կը
կարգէ. Բէքմէզեան կիրակոս և
պիսկոպոսը, յայտարարելով «Ես
արարի զքեզ նախագահ ընտրեալ
կան ժողովայն» վէ ջին լուրերէն
կիմացուի որ, իրիւս թէ կիլիկիոյ
կաթողիկոս ընտրուեալ է նոյն
այդ Բէքմէզեան ու ծառնամեայ
ցիւղածը որուն համար ստույգ ազ-
բիւրէ կը հաւաստեն թէ տգիտու-
թեան ոչինչներուն մէջ թաղուած
ողորմելի մըն է, եթէ կը ներուի
բացատրութեանս. հայրէն բաւ
մը իսկ չը գիտէր, և կը խմէ օ.

ըր երկու օխա օղի: Ահաւասիկ,
ուրեմն, մեր «նարնտիր» կաթո-
ղիկոսը, որուն վրայ Առանայի
կուսակալը պահպանիչ մը կարգա-
ւով ազգական է. «Ես արարի
զքեզ կաթողիկոս տանն կիլիկիոյ»:

Այս լուրերը արտակարգ յուզու-
ած պատճառաւ են ի կ. Պոլսի և տեղ-
ւոյն Հնչակեան Մասն. ճիւղը մէ-
մէկ սպառնական նամակ ուղղած է
Պատրիարքին և Տատեան Արթին
բաշտին, հրաւիրելով զիրենք
պաշտօնէ հրաժարիլ: Պատրիարքը
Երկրորդ կիլիկիոյ, գառնապէս
զանգատած է, կըսուի, իրաց վի-
ճակէն և ի մասնաւորի Առանայի
կուսակալէն, և հրաժարականը մա-
տուցանելով Բերա քաջուած է:
Իսկ Տատեան բաշտ 10 օրէ ի վեր
տունէն դուրս չիլլեր:

Թայմը իր ապրիլ 2 թուին մէջ
հրատարակած է պատճենը այն նա-
մակին զոր Պոլսոյ Հնչակեան մաս-
ն. ճիւղը մարտ 30 թուականաւ
ուղղած է Տատեան Արթին բաշտ-
ին և որ հաղորդուած էր նա-
խորդ թուով «Իրաւունք» ի ընթեր-
ցողից:

Միւս կողմէ Թայմը թղթակի
ցը կը հեռագրէ թէ, հակառակ
Սուլթանի ջանքերուն, Պատրիար-
քը այս անգամ ամուր կաշած կը
մնայ իր հրաժարականին: Երանի
թէ նորէն յուսալու չըլլայինք և
ինքն ալ մեզի հետ յուսալու
չըլլար:

...

ՊԱՏԻՈՅ ԱՏԵՆՆԵՐՈՒ ԶՈՒՐԶ

— (—) —

(Շար. նախորդ քիւնն եւ վերջ)

Շատ երկար ու բարակ փառա-
բանիւս հարկ չը կայ սպացուցա-
նելու համար թէ Հայաստանի ժո-
ղովուրդը այս ամեն անգամ ու
դարձածէն այս ամեն արտա-
ւոր պարագաներէ անտեղեկ է.
ինք ոչ արտասահմանի անկախ
թերթերը կը կարգայ եւ ոչ ալ
հանգամանքները կը ներեն սոս-
կական միջոցներով իմանալու շա-
հատակութիւնները, որոնք իր ա-
նունով կը գործուին հոս ու հոն:
Շատ շատ մերթ քմերթ օռ-
կան թերթերը կըստանայ. ասոնք
ալ յաւիտենական յուսկեամբ կը
նուիրագործեն իրենց մէջ եղած
զիջումները, խնայելու տնէջով
ժողովուրդի յարգանքը գէպի յե-

ղափոխական մարմինները. Նոյն
ողբալի ու կոյր դրութեան մէջ կը
գտնուին նաեւ ուսաստանքը, սա-
տարբերութեամբ միայն որ հոն
իրազեկներու շրջանակը կընդլայնի
մի քիչ և սակայն այդ իրազեկնե-
րու շատերն ալ առնչութիւն ու-
նին ուղղակի կուսակցական հաշիւ
ներու հետ:

Ըսել է ամբողջ Հայութեան մէջ
միակ տարրն է արտասահմանի
Հայութիւնը. որ կը կարգայ ա-
մեն թերթ. կը տեսնէ ամեն զեղ-
ծում, կը լսէ ամեն աղտոտ ամ-
բաստանութիւններ. դաւաճան լըր-
տես, մատնիչ, ոճրագործ, գող,
աւազակ սակաբերներու բերնէ բե-
րան թռչտելը, որ մինչեւ իսկ օռ-
կան թերթերու մէջ իրարու կը ձօ-
նուին պաշտօնական հանդիսաւո-
րութեամբ մի: Այդ արտասահմա-
նի հայութեան վերաբերմէ, որ
շատ մը ամուր կապերով շղթա-
յուած է Տաճկահայ միլիոններուն
հետ և իրաց բնական բերմամբ
ինք միայն մնացած է այդ միլիոն
ներուն մէջ հատիկ ներկայացուցի-
չը, ամեն կուսակցութենէ վեր:

Ինչո՞ւ չունչ հատցնենք. դի-
մենք նոյն իսկ այդ խեղճ խմբա-
գրին հայեացքներուն, որոնք շատ
մեծ կշիռ կուտային ամիսներ ա-
ռաջ, այսօրուան արտասահմանի
վերաբերմէ և մեծ մասամբ անպիտ-
ոս վնասակար համարած հայտար-
րին, երբ հարկ կըլլար Լա Հէյի
դեսպանախորհուրդին պատուիրակ
կարգել Պ. Չերազը. Եգիպտոս ու
Պուլկարիա միլիոններ կը կազ-
մուէին և յանուն տառապեալ Հայ-
րենիքին պաշտօն կը յանձնէին
Չերազին: Օրմանեան ժողովուր-
դի այդ արդար պառթկումը չէզո-
քացնելու համար դեսպանախոր-
հուրդին հեռագիր մը կուղղէր եւ
կը յայտարարէր թէ արտասահմա-
նի ձայնը, հայութեան ձայնը չէր-
ասոր դէմ ինք՝ այդ հէգ ու մո-
ռացկոտ խմբագիրն էր, որ ամե-
նէն աւելի կը գիտէր. կը ցցունէր
թէ հայրենիքի հայերը չեն կարող
բան մը խօսիլ և հետեւաբար ար-
տասահմանի հայութեան կը մը-
նար յանուն իրենց եղբայր գոր-
ծել, ինչ որ պէտք է լիազօր
ներկայացուցիչի դերով ու իրա

ունքով, Հիմայ ընթերցողին կը մնայ մտածել թէ ի՞նչ անուն տալու է ասանկ գրողի մը որ երեկուան գրածին վրայ այսօր, իսկ այսօրուանին վրայ ալ վաղը կը թքնէ և ինքզինք կը դնէ հակասութեան ծուղակին մէջ, շատ արգահատելի, շատ խեղճ . . .

Ըսինք արդէն ու կը կրննք, եթէ ամեն հանրային գործի գերագոյն դատաւորը ժողովուրդն է, արտասահմանի հայութիւնը միայն կարող է այդ գերագոյն դատաւորութեան գահալքը բարձրանայ, իրեն կռուան ունենալով միշտ մէկ կողմէն խօսելու, քննելու և գտնելու ազատութեամբ իր ձեռքն ունեցած անկապտելի իրաւունքը և միւս կողմէն Արդարութիւնը որ ամեն մեծաւորութիւն կը գերազանցէ. իբր օրինակ հոս տեղին է իշխելու Զօլայի հռչակաւոր կամքաւորները որ իր գէժ կը հանէր համարակալական պաշտօնէութիւնը և Ֆրանսոյի հանրային կարծիքը և սովորը Զօլայի խաղաղ ձայնը որ արդարութեան ձայնն էր, կարճ օրերու մէջ քսոր քանդ կրնէր իր գէժ ցցաւոր ժառանգը և իր արժանաւոր տեղը կը գրաւէր Արդարութեան սահմանած խոսկերով խնկաւած, Ամեն անոնք որ իրաւունք և արդարութեան գէժ գին ունէր կուզէին իմարաբար, ի հարկէ պիտի ջանալու ժամանակի կարճ հրովման մը մէջ. վասն զի շատ որոշ է, որ ամեն հասարակական ուժ կը ծնի ժողովուրդին ընդհանր քաղաքական աշակցութիւնէն, Ժողովուրդին գէժ աքցաններ ինտել և զուտ օրէն իսկ այդ ուժ կը կորսնցնէ իր կենսականութիւնը, ոչ ոք ալ մտքովէն չի մըջնորդ, բաւականութեամբ պարտքի ուղտին աքցանները, Արդ ժողովուրդը՝ պէտք չէ վախ ունենայ որ, իր դատաւորութիւնը՝ աս ուն կուտակցութեան դժգոհութեանը պատճառաւ, ապարդիւն կը մնայ. ընդհակառակը՝ կամ այն է որ կը համակերպին հզօր տարրին — ժողովուրդին — դատաւոր եղանակին ու **ԿԱՊՐԻՆ** և կամ այն է, որ չեն համակերպիր ու կը **ՄԵՌՆԻՆ**. Ուրիշ ճամբայ չկայ. Ուրեմն այս հայեացքներով որոշ կը տեսնուի, որ արտասահմանի հայութիւնը շատ ուշ մնացած է արդէն իր իրաւունք գործադրութեանը մէջ, որ անուղղակի կերպով պատճառ եղած է գիմակաւոր ներքին բազմաւարուն և մէկը միւսէն աւելի ցաւալի խաչագողութեանց յաճախելուն, եթէ այս յամա համակերպութիւնը քիչ մըն ալ տեսէ, Արտասահմանի հայութեան գերը շատ տխուր պիտի ըլլայ և պատմութիւնը պիտի բանայ ընկալաւոր անէժքի էջ մը որքան արիւնքներուն նոյնքան և աւելի ժամանակակից արտասահմանի հայութեան գէժ, որ կրնար քննել, կրնար գտնել, կրնար դատաւորել ու **ԼՈՒՆԵՑ** :

Լուսն ու այդ լուսնեամբ քաջալերեց մատիւններու, դաւաճաններու ձեռնարկները և գողութեանց յարձակունքները, որոնք նոր աւերածներ պատրաստելու կը ներկային հէգ հայաստանի մէջ : Ուշ է և սակայն դարձանիս գործայ խորհիլ պէտք է. ընտրել պէտք է շատ պարկեշտ ու բանիմաց մարդիկներէ պատուայ ատենանք, որ այս աւին աղտոտութիւնները քննէ ու դատէ :

Այդ պատուայ ատենանի կազմութեանը և պաշտօնին կիրառութեանը նկատմամբ մենք կը խօսինք մօտաւորապէս :

Վաճէ

1800-1900

—) (—

ՍՐՈՒՆԱԿԱՆ ԼՈՒՆԵՑ

Անցեալ դարուն մէջ պատահած գրական շարժումն ու յառաջդիմութիւնները եւ այդ ճիւղին մէջ նշանաւոր դէմքերէն մտնելու ու գլխաւորները համապատասխանութիւնով մը մէջ բերել յետոյ կանցնելու գիտական և արտեստական յեղաշրջումի պատմութեան ուրու էջերը գործարարած են նորանոր նշանակիչ գիտելիքներ և այսօր արտեստականութեան թիւերն ու գիտութիւնը աշխարհի հարթ ու միջոց եր ծնած են որոնք ամեն կերպով անհունապէս կողմնակալութիւնը եւ անհամեմատ զիրար ցնեւ ընդմիջելու ունի կեանքի պայմաններն ու պայքարը Արտեստականութեան գիտական կողմնակալութեան յառաջդիմութեանց մէջ թուիլ են գլխաւորաբար մեքենագիտութիւնը, ելեկտրականութիւնը, մագնիսն ու հեռագիրը, հեռաձայնը, անթիւ հեռագիրը, ձայնակիրը, լուսանկարը, շոգեմանը, շոգեկառքը, երաժշտութիւնը, բժշկութիւնը, վիրաբուժութիւնը եւ այլ բնական ու պարարտական գիտելիքները :

Ժժրդ դարուն արտեստական այս հսկայ յառաջդիմութեան եւ բազմակողմանի բարգաւաճմանը շնորհիւ յարաբերութեանց միջոցները գերազանցապէս զիւրացած ըլլալով նոյն համեմատութեամբ ալ միտմ առած են վաճառականութիւնը և այլ շահագործումները այնպէս որ այսօր մարդկային ընկերութիւնը ապրելու համար աւելի զիւրութիւններ եւ իր կեանքը նուազ ծանր ընկելու բազմաթիւ և բազմազան ընդհանր միջոցներ կան :

Այս գիտական և արտեստական բազմակողմանի եւ մեծածաւալ յառաջդիմութեանը շնորհիւ ընկերութեան յաւանական երախտագիտութեանն ու յարգանքին արժանի հերոսներէն գոնէ ամենանշանակալիները միշտակալ աւելորդ չենք տեսներ :

Շոգեկառք մեքենագիտութեան ճիւղին մէջ առաջին եւ հեղինակաւոր տեղը կը բռնեն Ֆիլիթոն, Տափլըն, Ուոլմոթ, Սթէֆէնսըն, Դիւլէտիք, Վիլիամս եւ այլք. որոնց կը պարտինք շոգեմանն ու շոգեկառքը :

Ելեկտրականութեան եւ մագնիսականութեան մասին մէջ ալ ժժրդ դարուն մեծանուն վարպետները կը նշատեն Վոլթա, Բէնքոր, Սփէնսէր, Եագոպտին, Հիւկ, Գալվանի, Արքան, Արափո, Տը—Լա—Միլ և աւելորդաճանթ Էսթիւն Ամերիկացին եւ այլք : Որոնք գտան հեռագիրը, հեռաձայնը, համաշխարհագիրը, կալվանիզմը : Ոչ նուազ կարեւոր գիտելիքն եղաւ անթիւ հեռագիրը, և ապագորդ հեռագիրը որ Պոնէլի Արքային գիտնէ :

Ժժրդ դարուն զլիւսաւոր գիտելիքներէն մին ալ լուսանկարն է որուն նախնական ստատորգները եղան Նիէփս եւ Տա

կէր աճաւորութիւնները որոնցմէ յետոյ մեծ մասամբ կատարեալագործեց այդ շոգեկառքը օգտակար գիտար Պլանքար Էլլար թղթի վրայ լուսանկարը հարեւրով, հետզհետէ կատարեալագործեւելու համէ է այդ գեղեցիկ արտեստար, որուն բրած յառաջդիմութեանը մէջ կարեւոր տեղ մ'ալ կը բռնէ հայագրի Տ. Մարտիրոս Գօնասցեան որուն գրութիւնը այսօր Եւրոպայի ի մասնաւորի Ֆրանսայի արտեստական այդ ճիւղին մէջ Սիսթէմ—Գօնասցեան անունով ծանօթ է և գնահատուած ու ընտրուած կարեւոր գրութեան մը տեղը բռնած է :

Այս առթիւ միայն կը ցաւինք հոս ակամայ յիշատակել թէ այդ տաղանդաւոր հայ վերջերս Մարտիկ յետին չեքաւորութեան մէջ վախճանեցաւ : Անցեալով Բժշկական եւ տարրալուծութեան ճիւղերուն տաղանդաւոր գրականները տեղը կը բռնեն Շափթալ, Թէնար, Շէվրէյ, անուանի են Բասթօր, Ռու, Պէրթը, Գոն, Եարքօ, Օկիւսթ Բ. Սաքսոնի թագաւորը, Տիւֆիլէզ վիրաբույժը եւ որի մէջ քանիներ որոնց անմահ շարքին մէջ վերջերս գնաց կարեւոր տեղ մը բռնել Տ. Տօք. Երուանդ Մանուէրեան հայագրի երախտագիր բժիշկը իր ճիւղին մէջ ըրած մեծ մէկ գիտելիքները : Այնպէս զարգացած եւ տաղանդաւոր կան կարեւոր ուսանց մէջ նշանաւոր հանդիսացած են Կալ, Տը—Պայ, Հէրշէյ, Էնք, Հայր Սէքսի Արքան, Բասթիլ, Ֆրանսարիտ իրենց երկրախոսութեամբ, իսկ Երկրախոսութեան մէջ աշխարհագրական պատմութիւնը կարեւոր էջեր նուիրած է Պարտի Տը Սէյ Վէնսանի, Պարթի, Կէմարտի, Լիվինկսթընի, Նորտհեմբրոյ Շուեստի, Հուսթօլտի, Սթանլէյի, Նանզէնի, Անտրէի, Տիւլէյի, Պորիւ, Ժոզֆմանի, Լէյարտի, Ռաուլէնզի եւ Գալիլէոյի, որոնց շնորհիւ այսօր երկրաբանութեան վրայ գրեթէ անձնաթիւ կէտ մը չէ մնացած ալ եւս. ի բաց առեալ այն մէկ քանի տեղերէն ուր բնական անյաղթելի դժուարութիւնը արգելք ըլլան միջնեւ ցորդ :

Իսկ արտեստական այն ճիւղերը որոնք ուղղակի մարդու ճաշակին ներքայմանն ու աշխարհային ու զգացմանը փափկութեանը կը նպաստեն ինչպէս են ճարտարապետութիւնը, պատկերաստութիւնը, արձանագործութիւնը, երաժշտութիւնը ունեցած են իրենց անուանի եւ համաշխարհային համբաւի արժանացած վարպետները :

Ճարտարապետութեան եւ երկրաշափութեան ճիւղը առնելով ժժրդ դարուն արտեստական պատմութեան մէջ նշանակելի կը գտնենք :

Շէնքէլ Գերմանացին, Լըրէր, Պէրրի Միլիթային, Պրիւնի, Լէստէփս, Էլֆէլ իսկ արեւելքի մէջ Երեմյան Պալեան մեծանուն ընտանիքէն Գարապետ, Նիկողոս, Յակոբ եւ Սարգիս Պէյ Պալեանները որոնց Պոլսոյ մէջ շինած պալատներն ու շէնքերը նոյն իսկ Եւրոպական արտեստագիտաց հիացմանը ու գնահատմանը արժանաւորով տիեզերական համբաւ մը շինած են այդ Հայ անուններուն շուրջ :

Պատկերաստութեան ճիւղին մէջ ալ նոյնպէս նշանաւոր հանդիսացած եւ զատաւոր գործերու հիմնադիրը եղած են Շէֆֆէր եղբայրները, Լէհման, Ալֆրէտ եւ Թոնի Ժոնանիս, Ֆրանսէն, Երոյ Բաւարացի, Ուլթայէ, եւ Բօրնէլիուս գերմանները, Լօրէնս եւ Ուտենը անգլիացիները :

Իսկ մասնաւոր յիշատակելի տեղը կը բռնեն Ափիլանի միլանցին, որ Նաբօլէոն կայսեր նկարիչը եղաւ, Պէնզէնուլի, Գաուլլիի եւ Հայէս Վենետիկցին :

Պատկերաստութեան ճիւղին մէջ իր տիեզերական համբաւով անմոռանալիէ հայագրի Ալֆրէտ Պէրրի ալ, ուրախալի եւ միջիթարական է նաեւ որ այս օրերը երեւան կուգան դեռաւոր տաղանդներ որոնք ապագայ Ալֆրէտ Պէրրի ըլլալու յոյսը կը ներշնչեն :

Նուագի եւ երաժշտութեան մէջ գրեթէ ամենամեծանուն Պէթովէն, Շոպէն, Երաւէր, Վէպէր, Մէյնպէր, Վալէր, Լիւց, Պէլլինի, Գոնթէր, Վէրտի, Ռիչի, Կուսօ Ֆրանսուզին, Օպէ, Քէրպպին, Պէրդոյ, Շուան, Պուլտիկօ եւ Ն. Այս զատակար գին մէջ ապահովաբար պիտի կրնայինք գտնել ողբացեալ Չոստոկովիչի հայագրի երաժշտալ եթէ երբէք ձայնորդութիւններ — ինչպէս շատ քիչ բացառութեամբ կը պատահի ամեն հայ տաղանդի — արգելք չըլլային իրեն ծանօթանալու լուսաւորեալ աշխարհին Այսօր այդ ճիւղին մէջ իրեն ազգակիցներուն պարծանք եղող համբաւաւոր Տ. Ուլտեանի անունը :

Արձանագործութեան եւ փորագրութեան մէջ նշանաւոր են Անտուան Բ. տալպին, Թորվալտէն Տանրաքս, Գին, Ֆրանսուան Անգլիացին, Փրոտիլէ եւ Ռիւս Ֆրանսացիները ու Շիւանթովէն գերմանը :

Փորագրութեան մէջ Գոլաւ եւ Տօք, Բէլէն վերջ կրնանք յիշատակել հայագրի Տ. Պէնտէրեանը, պատկանելի են իւրեն մը թէեւ միջնեւ ցորդ շատերու անձնաթիւ է իր անունը, բայց արտեստական համազգային շրջանակին մէջ կընայ կարեւոր տեղ մը բռնել Միլիթարական է մեզ համար որ այդ մեծաշարք ծերունիին արժանիորին կերն ու յաջորդը կըլլայ ուրիշ Հայ մը Տ. Էկտար Շահին, որուն գործերը այսօր Անգլիոյ նման դժուարահաճ ստանի մը մէջ մեծ հիացմամբ կը գնահատուին :

Անցեալ դարու արտեստական յառաջդիմութեան ամենափայլուն ապացոյցները համարուող մին միւսէն սակեթ արտեստական համազգային շարքէն զատ, Սեւէյի, Կորնթոսի, Քիլի Ֆրանցիսքըն ալ ճարտարապետութեան քննարկման մեծ աստիճանին հսկայ վկանքներն են :

ՀԱՒԱՎԱԾՈՅ ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք «Հայ Ժողովրդական երգերի հաւաքածոյ»ի առաջին տետրակը, որ իր տեսակին մէջ առաջինն է և կարեւոր պսկաս մը կը լինէ, հայկական երաժշտութիւնը կովուած ու բարեհաւան լերկայի ծանօթացնելով :

Ամբողջ գործը 6 տետրակներէ պիտի բաղկանայ, որք յաջորդաբար լոյս պիտի տեսնեն իւրաքանչիւր երկու ամիսը անդամ մը :

Առաջին տետրակը՝ զոր ստացած ենք, կը պարունակէ հետեւեալ 6 երգերը, Գաղղիի բնիկ իտալեան թարգմանուած ու երաժշտական ձայնաշինելով ձայնագրուած :

1. Մայր Արաքսի, թրքահայոց եղանակովը,
2. Հրիք որդեակ,
3. Երբոր բացուին,
4. Հայրիկ, երգ, որ նուիրուած է Վ. Կ. Խորիմեանի իր կաթողիկոսական ընտրութեան առթիւ :
5. Զիւլ զիլին, Մայր և Վանայ գաւառներու պարի երգ,
6. Բօյք բարձր, պորթիկ կասահայիրու :

7. Արի իմ սոխակ, օրօրոցի
երգ՝
իսկ երկրորդ և յաջորդ տետրե-
րուն նկատմամբ ստացած ենք Տ.
լիսն Եղիազարեանցէ հետեւեալ
նամակը՝
Առաջին տետրի գինն և 6 ֆր.
հասցէն՝

M Leon Eghiazarian
5 Rue de Châteaudun
Paris

Խմբագիր:

Որոշում ընդունելով որ իմ
նկատմամբ ստացած ենք Տ.
լիսն «Հայոց ժողովրդական երգե-
լի» որն որ դուրս է գալիս տը-
պարանից, իրաւ է թէ այս առա-
ջի տետր մի քիչ ուշացու լոյս
տեսնելու, բայց եթէ իմանալիք
մի քանի մեղմից անկախ պատ-
ճառներ, դուք եւս անշուշտ ներո-
ղաւոր պիտի ըլլալիք դէպի մեզ:
Այս ներդաշնակները կը յուսով որ
անցեր են և այսուհետեւ միւս
տետրերը լոյս կը տեսնեն ժամա-
նակին այսինքն ի տետրը 15 մա-
լիս, Գը՝ յունիսի վերջերը են:
Աւելորդ չենք համարիր Ձեզ
ծանօթացնել մեր հրկրորդ տետրի
ընդհանրական ձևին հետ, որը ո՞-
րոշած ենք բաժնեկալային:

1. Սոյի (միակ ձայնի համար)

1. Տիօ-Պիօ (երկու երեք ձայ-
նի համար):

3. Շեօն (խմբերգի համար):

4. Հայոց հեղինակների երաժշ-
տութիւններն ապելու համար, այդ
ծառով կուզենք միանգամայն Եւ-
րոպան ծանօթացնել թէ հայ ժո-
ղովրդական երգերի և թէ հայ
հեղինակների հետ:

Բ. տետրի մէջ կը լինին հետևե-
ալ երգերը: Սոյի 1. Արաքսի ար-
աւստը (եղանակ որ կերպն ուն-
սահայեր): 2. Կրեւնկ. 3. Մայ-
րիկ. 4. Հայաստան (այս կարնոյ
երկու երգերը): 5. Ձայն հնչեց
էրզրումի. Բ. Տիօ Պիօ. 1. Իս
լսեցի մի անուշ ձայն. 2. մայրիկ
Գ. Շեօն. 1. Պոյգ բարձր Սալ
վազինա. 2. Արեւն ելաւ Ձէյթուն
ցիներ. 3. Արաքսի արաւստը:

Մենք լիովին յոյս ունինք Ձեր
համակրութեան վրայ և կուզենք
լուսով որ դուք նոյնպէս կը բարե-
հաճիք մեզ զրկել միշտ Ձեր յար-
գելի լրագիրը:

Ընդունեցէք մեր խորին յարգա-
նաց հետևածքը:

Լ. Եղիազարեան
Բարիկ, 11 ապրիլ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Բարիկ, 16 ապրիլ 1900

Երեկ Նոր բացումը՝ հայ-
կական ճաշարանին մէջ՝ ակադեմի-
այ տեսարանի մը, գոր վարը պիտի
ներկայացնեն. սա հարցը տալու բնա-
կան պահանջը զգացի. «հայ» «Շար-
ժում»ը ներդաշնակներ խնդրելու պէտ-
քը չզգարի:
Ճանեակ մը հայեր, պ. Չօպանեան,

մէկ քանի հայ բժիշկներ, ուսանողներ
և. գրագէտներ իրիկուսն ընթերցե-
նեքու. եկած էին հոն. եւ անա բոլորի
ուշագրութիւնն դարձաւ դուրսը, պա-
տուհանին ու գուռին առջեւ չընդ-
նիհար, երկարահասակ, խիտ մագնով
երկտասարդի մը վրայ, զինքը յոյզով
տենդ մը ունէր իր ներսիցին եւ արա-
պութեամբ կը դառնար պատուհանե-
րու ու գրան առջեւը, յաճախ ակնար-
կը ճաշարանի ներսը դարձուցած: Քիչ
մը յետոյ գուռը բացաւ ու ներս մը-
տաւ: Ձիւքը չէի ճանչնար եւ չգիտէի
ով ըլլալը, երբ քովի բարեկամս հաս-
կցուց թէ դերասան Պ. Կ. Գալֆայեա-
նն է, Պոլսոյ հռչակաւոր հայ ողբեր-
գուն: (.)

Հետաքրքրութեամբ դիտել սկսայ
զայն եւ իր շարժումները, որովհետեւ
Անանիսի մէջ կայ դասեր էի Պ. Չօպա-
նեանին այն շատ իրաւացի եւ շատ
խիտա ընդարձակութիւնը: Այն պա-
հուն արդէն Պ. Գալֆայեան ճաշարա-
նի ընդարձակ սրահը անցնելով կանգ-
նած էր, այն սեղանին առջեւ ուր Ա-
նանիսի տնօրէնը կը ճաշէր ուրիշ բա-
րեկամի մը հետ:

Պ. Գալֆայեան սիգարէն առջեւ կանգ
նած՝ բարեկամը Պ. Չօպանեանի սեղա-
նակիցը, խօսքը բոլոր ներկաներուն
ուղղելով սա նախադասութիւնը ար-
տասանեց.

«Պարոններ, սովորներ յետոյ ես
զգացած եմ իմ յանգանքը. իմ անիրա-
ւութիւնը, ճշմարտութեան բարձրու-
թիւնը, ինքզինքս Պոլսոյ հռչակաւոր
ողբերգու անուանելու համար պ. Չօ-
պանեանին ըրած շատ իրաւացի քննա-
դատութեան դէմ. ես, նոյն իսկ փո-
խանակ զիջանելու, լրբաբար փորձեցի
իրեն վրայ յարձակում գործել: Այո՛,
եւ յանցաւոր էի եւ անիրաւ, կողքում
զայդ, բայց չէ՞ որ Պոլսոյ առաքեալ եւս
առաքեալ ըլլալէն առաջ շատ մեղքեր
էր գործած ու յետոյ զգլխով ներուե-
ցաւ: Ես նոյնպէս կը խնդրեմ ինձ նե-
րուի. իսկ եթէ պ. Չօպանեան միշտ
ուզէ թշնամի մնալ ինձի դէմ, ես եր-
բէք զինքը ինձի թշնամի չպիտի նկա-
տեմ այլ բարեկամ:

պ. Գալֆայեանի ճառը լրացած էր.
նստողներս՝ մատ բերաններս՝ դարմա-
ցած կը նայէինք այս տեսարանին. նե-
րողութեան շարժառիթը չզրկեցինք. պ.
Չօպանեանը շատ գոհ եղաւ զզիւն
կամ հայ երիտասարդէն. գովեց զինք,
խրախուսեց, քաջալերեց որ աշխատի
իր մասնաձեւը կատարելագործելու.
քննա միաքէն չանցնէ եւրոպայի մէջ
ներկայանալ որպէս «պոլսոյ թէատրո-
նի տէր, պարոն ու հռչակաւոր հայ
ողբերգու» ապա թէ ոչ միշտ ու ամեն
անգ զինք պիտի խաղաղանէ:

պ. Գալֆայեան զիւրի ու ձեռքի շար-
ժումով ու օդի մէջ իր երկար ու վը-
տիտ ձեռքերը բանալով կ'ստատ հա-
մաձայնութիւն մը ցնուց ու քաշուե-
ցաւ սեղանի մը վրայ ճաշելու: Երեւի
զեռ ուրիշ ապահովութիւններ ձեռք
բերելու պէտքն ունէր, մէջ մըն ալ
անդէն ցատկելով պ. Չօպանեանի դի-
մացը կ'անդնայ. «Ես հոս կը նստիմ
պ. Չօպանեանի ձեռք դէմը, ու կ'սկի-
նեքողութիւն պիտի խնդրեմ շատ ու-
րախ եմ որ իր բարեկամութեամբ ար-
ժանացայ»:

Ու պ. Չօպանեան սիգարէն պնաց
նստեցաւ:

Քիչ յետոյ բսաւ որ երեք ամիս ա-
նընդհատ ուսանելով իրցած է ՀԱՄ-
Լէթը ֆրանսերէն ներկայացնելու չափ
յաջողել եւ ամիս մը յետոյ «Համլէթ»ը
պիտի խաղայ ֆրանսերէն լիզուով:

պ. Չօպանեան սա վերջաբանը ըսե-
ով մեկնեցաւ:

«Կը մախթում որ Եւ աւելի խելօք
ըլլաս, բայց եթէ համարձակիս իբրեւ
հռչակաւոր ողբերգու, որպէս հայ ու-
սանող, որպէս պոլսոյ դերասան երեւ-
նալ, կամ ստաւ խօսիլ համարձակիս
նոյն իսկ, ներկայացումը արգիւնելու
պիտի ջանամ: Ուրիշ պարագաներու

մէջ ինչ կուզես՝ ըրէ, միայն առանց
ազգութեան անուան արատ բերելու»:

Ծաւ զգացի տեսնելով որ այս շատ
բարի, խելօք ու ցաւագար տղուն կա-
ցութիւնը եւ արամարհանք մը զգա-
ցի դէպի անոնք, որոնք զինքը կը քա-
ջալերէին ու կը քաջալերէին իր հիւան-
դոտ մտածմանց երեւակայութիւնը ի-
րականացնելու. զինքը «հանճար» մը
ներկայացնելու:

Ու մանաւանդ դէպի սա «կինոտա-
կան» «Շարժում»ը որ այնչափ յոխոր-
տաց, ինչպէս գիտէ ընել ամեն ան-
գամ, նոյն իսկ այն միջոցին որ ծիծա-
ղելի կը դառնայ: Գալֆայեանը ցաւա-
գար ըլլալով հանդերձ, կարծեք կըզ-
գայ ու մտածողութիւնը կուսնենայ իր
ըրած նիւթները տեսնել ու ազնուո-
թիւնը իր յանցանքին համար գալ ու
ներողութիւն խնդրել: Հապա ուրիշմ
սա «Շարժում»ը հրապարակաւ ներո-
ղութիւն խնդրելու պէտք չի զգար:

Ա. Խ.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՒ ԹԻՒՐԵ

Բաւական կարեւոր վիճաբանութիւն
մը տեղի ունեցաւ Ամերիկացոց եւ
Թուրքերուն մէջ: Այդ երկու ազգե-
րուն յատկացուած տեղիւրուն առթիւ
(1900 ցուցանադէսին մէջ), Թուրքա-
կան չէնքը՝ կիսեւայ թէ ամերիկային
արատ կը բերէ, մանաւանդ թէ վերջ-
նայ պատկանող հողին վրայ կառաջա-
նայ: առաջին անգամ այս մասին
Միացեալ Նահանգացի դեսպանը դիտո-
ղութիւններ ըրաւ: Դրան դեպքանին
բայց որովհետեւ ամերիկացոց պահանջ
ներն առանց հետեւեալի մնացին խն-
դիրը մինչեւ Կ. Պոլիս կը հասնի եւ
որովհետեւ խնդիրը շատ կերկարի նոյն
իսկ Օսմանի սն մայրաքաղաքին մէջ,
Կ. Պոլսոյ ամերիկեան դեսպանը փու-
թով Թարիզ կը կանչուի, Բարիզի ա-
մերիկեան դեսպանին հետ բանակցելու
համար:

Միջոցը դեռ այս վիճակին մէջ, Մի-
ացեալ Նահանգացի կառավարութիւնը
չորդի տեղի տալ. նա կը պահանջէ,
պարզապէս Թուրք չէնքերու քանդու-
մը:

Ս. Դ.

ԻՐԱՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Մ. Տ. Մանուէլեան Սուլինա—Մար
տիրոսին տեղը իմացած ենք. Ձեր հաս-
ցէն ցոյց տուէք եւ երկու ֆրանք զը-
կեյէք:

Տ. Ս. Գոռայիւէ—Ձեր ուզած գըր-
քերը մեր քով չկան. Ձեր ֆարք—քոս-
քալներուն տուգանք վճարեցինք:

—Խալք. Հայրենիքի Ամերիկա—Ձեր
թերթը դադարեցուցած ենք. բայց եթէ
ամեն շաբթու դատ դրկել սկսիք,
մենք ալ նոյնը ընեմք պատրաստ ենք:

—Տ. Ա. Շ. Պոլիսէն—Ապրիլէն ըս-
կըսած ենք ձեզ թերթ զրկել, բաժնե-
գիրը կամ պուլկար ազգային պանքա-
լին վրայ չէքով մը եւ կամ Մընի օռ-
տով զրկելու էք:

Ամերիկայէն նամակի ծոցով մեզ զըր
կուած թղթագրամները 15 0/0 փեսա
կընեն հոս:

—Ռուսներէն մեզ զրկուած ֆարք—
քոսքալները 10 սանդիմնոց պէտք է ըլ-
լան. շատեր սխալմամբ 5 սանդիմնոց
կը զրկեն, որուն համար մենք կը պար-
տաւորինք հոս տուգանք վճարել: Ուս-
տի վերջնականապէս կը ծանուցանենք
որ պակաս նամակագրումով մեզ զըր-
կուած նամակներ կամ քատեր կը
մերժենք ընդունել, հետեւեալը կը
կորսուին:

—)(—

ԼՐԱՔԱՂ

Ռուս կառավարութիւնը Նոր-
Պայազիտ գաւառի քսան գիւղե-
րուն որոշեց է 24,000 ռուբլի փո-
խատուութիւն մը ընել կերակուրի
և սերմնացուի համար: Այդ գիւ-
ղերուն մեծամասնութիւնը հայ է.
անանկ ու 6,000 ազգայիններ, ու-
րոնք անցեալ տարուան չորութեւ
նէն մեծապէս փնտրուած էին պիտի
օգտուին այդ փոխառութիւնէն:

—Վերջերս հասած լուրերէն ու-
րախութեամբ կը տեղեկանանք թէ
Վիէննայի Միութեանաց արքա-
հայր Հ. Արսէն Այտընեան ապա-
քինել սկսած է:

—Վեհ. Հայրապետը օրհնու-
թեան կոնգակ մը զրկած է Ման-
չէսթրի մէջ կրօնական հանգէսի
մը հաստարակութեան ձեռնարկող
Ջուզապցի Տ. Թորոս քահանա-
լին:

—Խարբերդի ազգայնոց մէջ Ա-
մերիկա գաղթելու և հոն գործա-
ւորի կեանքով ապրելու միտում մը
կիրելի. ասոնցմէ արդէն 50 ըն-
տանիք հարկ եղած դիմումները
ըրբեք են ճամբայ ելլելու արտօնու-
թիւնը ստանալու համար:

—Բարիզի Հոգեւոր հովիւ Տ.
Վասալապուհ քահանայ, ինպաստ
Հայաստանի կարօտելոց հանգանա
կութեան մը ձեռնարկած է Ս.
Ջատկի առթիւ:

—Շուվաէն մասնաւոր նամա-
կով մը մեզ կը տեղեկացնեն թէ
տեղւոյն հոգաբարձութեան ան-
դամներէն մէկուն և վարժապետի
մը մէջ գանակոծման դէպք մը
տեղի ունեցեր է:

—Ամերիկաքնակ ազգայիններէն
Պ. Կիւլէզեան Ուաշինկթօնի կա-
ռավարութեան մօտ այս անգամ
ազգու գիմուսներ ընելով կաշխա-
տի եղբւր վերջ մը տալ Ամերիկա-
յի քաղաքացի եղող հայոց այն ա-
նորոշ վիճակին որ է, թէ Ամերի-
կեան կառավարութեան և թէ Օս-
մանեան պետութեան տուրք վճա-
րելին. որովհետեւ Թուրքիա այդ
կարգի հայոց Ամերիկայի հպատա-
կութիւնը ճանչնալ չուզեր:

—Եգիպտոսէ 30 ոսկի զրկուած
է Պատրիարքարան ինպաստ Հա-
յաստանի կարօտելոց:

—Այս տարուան իզմիրեանց մըր
ցանակի Թանճաժողովին ներկա-
յացուած երկերուն մէջ կարեւորա-
գոյն և շահեկան երկն է եղբւր
Պարսկահայոց ծագման և դարեւ-
րու ընթացքին մէջ կրած փոփո-
խութիւններուն վրայ աշխատու-
թիւն մը:

—Պոլսոյ Խաւաքիւղին մէջ Հը-
րեայ վաճառականի մը մահուան
առթիւ տեղոյն միութարին կար-
գադրութեամբ, Ս. Ստեփաննոս
եկեղեցիին գանգակը հնջեցնել եւ
քահանաներն ընդ առաջ հանել
տուրեր է. նաեւ ջանացեր են որ
դպրոցական երգեցիկ տղաներ ալ
բերուին Հրեայ ննջեցեալին ի պա-
տիւ. բայց դպրոցին վարժապետը
այդ կարգադրութեան դիմադրե-
րու արգիւնը է:

Отговорникъ Н. Драгулевъ